



ՊԱՇՏՈՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ

Տարադրամի փոխանակման կետի
աշխատակից
Ճկուն և/կամ փոփոխական
ք. Երևան, ՀՀ
Հնարավորինս շուտ
Նոյեմբերի 29, 2022թ.
Դեկտեմբերի 12, 2022թ.
Անժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն «Կենտրոն» մասնաճյուղում տեղակայված տարադրամի փոխանակման կետի աշխատակցի հաստիքը զբաղեցնելու համար փնտրում է մոտիվացված և հմուտ թեկնածուի, ով պատասխանատու է ստորև նշված պարտականությունները կատարելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հաճախորդների սպասարկում, հաշվարկադրամարկղային ծառայությունների մատուցում,
- Արտարժույթի կանխիկ և անկանխիկ առք ու վաճառքի իրականացում,
- Հաճախորդների կարիքների բացահայտում, նոր հաճախորդների ներգրավում,
- Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վաճառքի/խաչաձև վաճառքի իրականացում,
- Անմիջական ղեկավարի կողմից տրված հանձնարարականների և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնությունների իրականացում:

ՊԱՅԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն,
- Կանխիկ դրամի հետ աշխատելու փորձ,
- ՀՀ բանկային օրենսդրության իմացություն,
- Համակարգչային գիտելիքների լավ իմացություն (MS Office),
- Հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների լավ իմացություն,
- Հաղորդակցման և բանակցություններ վարելու հմտություն,
- Վաճառքի հմտություններ,
- Թիմային աշխատանքի պատրաստակամություն,
- Տարբեր իրավիճակներում աշխատելու և արագ կողմնորոշվելու ունակություն

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴԻ Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴԻ Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴԻ Բանկ» անվանումով: ԱյԴԻ Բանկի առաքելությունն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը <https://www.idbank.am/>: